Ա Ն Գ Ղ

Անգղ թուրքերէն կը նշանակէ կոչ-կոչ կամ ղարղայ, որ ագռաւին մի տեսակն է։ Ղարղալիս անունով երկու գիւղեր ունինք Արածանւոյ երկու ափերուն վերայ և հանդէպ միմեանց. մին աջ ափին վերայ, որ Անդափի կը պատկանի և կասուի փոքր Ղարղալիս, միւսն է մեծ Ղարղալիս, որ կը վերաբերի Ծաղկոտն գաւառին։

Ղարղալիս Գարա-Քիլիսէէ 7—8 ժամ ի հարաւ՝ Բաղնոցէ 4 ժամ յարևմուտս և Քեսուկայ ջրին ի Մուրատ խառնուրդէն 1 1/2 ժամ արևելեան հիւսիս Ծաղկոտն գաւառի վերջաւորութեան վերայ մի մեծ գիւղ է և աւելի մօտ Մանազկերտի, քան Գարա-Քիլիսէի. սակայն Մանազկերտէն Ծաղկոտն անցնելու ճանապարհին վերայ գտնուելուն՝ ի հնումն նշանակութեան արժանի մի վայր եղած լինելու յարմար է։

Մեծ Ղարղալիսի 1 ժամ արևելեան հարաւն հողի մէջ բարձրացած կայ մի մեծ քար, որ տաշուած և վերան մի մեծ մարդու կարասեաց և սպասուց պատկերներն փորագրուած է, այս անօթոց վերան ևս 4 կարգ գրուած կայ, որ յիշատակարան է, կասեն, մի հարսի և իւր կեսրարին հանդերձ իւրեանց անուններով։

Ղարղալիսցիք մի հայ տիրացու բերած են, որ կախարդական միջոցներով կարասներու հորուած վայրն իմանայ, պահուած գանձը ի լոյս հանէ։

Տիրացուն կը ձեռնարկէ կախարդական գործողութեանց, գիւղիս մերձակայ այլ քուրդ գիւղացիք, Ղարղալիսցոց ընդդիմութիւն կանեն և թոյլ չեն տար, որ իւրեանց քաւշանին մէջ խուզարկութիւն լինի, և այս առթիւ մաղ մնաց որ մարդասպանութիւն ևս լինի։